
ԽՈՒՄԲ 1

147 հարց

ABC կարգեր · տեսական հարցաշար

1. Նշաններից ո՞րն է կոչվում «Արգելքի շրջանցումը ձախից»:




1. 1
2. 2
3. **3**
4. 4
5. 5

Պատ.՝ 3

---

2. Նշված դեպքում ո՞ր գոտուց պետք է կատարվի աջ շրջադարձը:



1. Միայն երկրորդ գոտուց
2. **Միայն «A» գծանշումով նշված աջ եզրային գոտուց**

Պատ.՝ 2

---


3. **Խաչմերուկում կազմակերպված է շրջանաձեւ երթեւեկություն: Երթեւեկելի մասը, որով մոտենում եք խաչմերուկին, ունի երթեւեկության երկու գոտի: Խաչմերուկ մուտք գործելիս՝ շրջադարձ կատարելու համար ո՞ր գոտին եք պարտավոր զբաղեցնել:**

1. Աջ գոտին
2. Ձախ գոտին
3. **Կա՛մ աջ, կա՛մ ձախ գոտին**

Պատ.՝ 3

---

4. **Թույլատրվու՞մ է արդյոք մուտք գործել բակ նշված տեղից:**



1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---


5. **Երկկողմ երթեւեկությամբ գծանշված ճանապարհներին, երեք գոտու առկայության դեպքում (բացառությամբ երթեւեկության դարձափոխային կարգավորմամբ ճանապարհների), որոնցից միջինն օգտագործվում է երկու ուղղություններով երթեւեկության համար, ձախ եզրային գոտի մուտք գործելը**

1. Թույլատրվում է:
2. **Արգելվում է:**
3. Թույլատրվում է՝ միայն վազանցի, շրջանցման, ձախ շրջադարձի կամ հետադարձի համար:

Պատ.՝ 2

---

6. Ո՞ր պատասխանում է ճիշտ նշված երթեւեկության թույլատրելի ուղղությունը:




1. Միայն հետադարձ
2. Ուղիղ եւ հետադարձ
3. **Միայն ուղիղ**

Պատ.՝ 3

---

7. Ո՞ր ուղղությամբ է արգելվում երթեւեկությունը:



1. **Դեպի ձախ եւ դեպի աջ**
2. Ուղիղ եւ հակառակ ուղղությամբ
3. Միայն ուղիղ
4. Բոլոր ուղղություններով

Պատ.՝ 1

---


8. Հետադարձն արգելվում է

1. Հետիոտնային անցումների վրա:
2. Թունելներում:
3. Կամուրջների, ուղեկամուրջների, Էստակադների վրա եւ դրանց տակ:
4. Երկաթուղային գծանցներում:
5. **Թվարկած բոլոր դեպքերում:**

Պատ.՝ 5

---

9. **Ո՞ր պատասխանում է ճիշտ նշված երթեւեկության թույլատրելի ուղղությունը:**



1. Ուղիղ եւ դեպի ձախ՝ մուտք գործելով բակ
2. **Միայն ուղիղ**
3. Միայն հետադարձ
4. Ուղիղ եւ հետադարձ

Պատ.՝ 2

---

10. **Հետադարձն արգելվում է, եթե ճանապարհի թեկուզ եւ մեկ ուղղությամբ տեսանելիությունը պակաս է**

1. **100 մ-ից:**
2. 150 մ-ից:
3. 300 մ-ից:

Պատ.՝ 1

---

11. **Դուք երթեւեկում եք երեք գոտի ունեցող երկկողմ երթեւեկությամբ ճանապարհով: Ո՞ր դեպքում է թույլատրվում մուտք գործել միջին գոտի:**

1. Միայն վազանցի դեպքում
2. Միայն շրջանցման դեպքում
3. Միայն ձախ շրջադարձի կամ հետադարձի դեպքում
4. **Թվարկած բոլոր դեպքերում**

Պատ.՝ 4

---

12. Ո՞ր ուղղությամբ է թույլատրվում բեռնատար ավտոմոբիլի երթեւեկությունը:




1. Միայն դեպի աջ
2. **Դեպի աջ, դեպի ձախ եւ հակառակ ուղղությամբ**
3. Միայն դեպի ձախ

Պատ.՝ 2

---

13. Ո՞ր նկարում է վարորդը ճիշտ կատարում մանեւրը:




1. 1
2. 2
3. 3

Պատ.՝ 1

---

14. Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն է ճիշտ կատարում հետադարձը:



1. Կապույտ ավտոմոբիլի վարորդը
2. **Կարմիր ավտոմոբիլի վարորդը**
3. Երկու վարորդներն էլ

Պատ.՝ 2

---


15. Ճանապարհային նշանների, գծանշման եւ բաժանարար գոտու բացակայության դեպքում վարորդները երկկողմ երթեւեկությամբ ճանապարհների երթեւեկելի մասում գտնվող ճանապարհային կառույցների տարրերը պետք է շրջանցեն

1. **Աջ կողմից:**
2. Ձախ կողմից:

Պատ.՝ 1

---

16. Ո՞ր ուղղությամբ է արգելվում երթեւեկությունը:




1. Միայն դեպի ձախ
2. **Միայն դեպի աջ**
3. Ուղիղ եւ դեպի ձախ
4. Բոլոր ուղղություններով

Պատ.՝ 2

---

17. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն է խախտում կանոնները շրջադարձ կատարելիս՝ արգելակման գոտի ունեցող ճանապարհին:**



1. Երկու վարորդն էլ
2. **Դեղին ավտոմոբիլի վարորդը**
3. Երկու վարորդն էլ շրջադարձը կատարում են ճիշտ

Պատ.՝ 2

---

18. **Թույլատրվու՞մ է արդյոք տվյալ իրադրությունում կարմիր ավտոմոբիլի վարորդին շարունակել երթեւեկությունը:**



1. Թույլատրվում է
2. **Արգելվում է**

Պատ.՝ 2

---


19. **Երեք գոտի ունեցող երկկողմ երթեւեկությամբ ճանապարհի վրա Ձեզ անհրաժեշտ է կատարել ձախ շրջադարձ: Ո՞ր գոտուց կկատարեք տվյալ մանեւրը:**

1. Աջ գոտուց
2. **Միջին գոտուց**
3. Աջ կամ միջին գոտուց
4. Միջին գոտուց, եթե զբաղեցված է աջ գոտին

Պատ.՝ 2

---

20. **Թույլատրվու՞մ է արդյոք կարմիր ավտոմոբիլի վարորդին երթեւեկել տրամվայի գծերով:**



1. **Թույլատրվում է**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---


21. **Հետադարձն արգելվում է**

1. Հետիոտնային անցումների վրա եւ թունելներում:
2. Կամուրջների, ուղեկամուրջների, Էստակադների վրա եւ դրանց տակ:
3. Երկաթուղային գծանցներում:
4. Ճանապարհի՝ թեկուզ եւ մեկ ուղղությամբ 100 մ-ից պակաս տեսանելիության տեղերում:
5. **Բոլոր թվարկած դեպքերում:**

Պատ.՝ 5

---

22. **Ո՞ր ուղղություններով է թույլատրվում երթեւեկությունը:**



1. Միայն դեպի ձախ
2. **Ուղիղ, դեպի ձախ եւ հետադարձ**
3. Միայն ուղիղ

Պատ.՝ 2

---

23. **Ո՞ր տրանսպորտային միջոցների վարորդներն են խախտել ճանապարհային նշանի պահանջները:**



1. Մոտոցիկլների վարորդները
2. Ավտոմոբիլի եւ կողային կցորդով մոտոցիկլի վարորդները
3. Միայն ավտոմոբիլի վարորդը
4. **Բոլոր տրանսպորտային միջոցների վարորդները**

Պատ.՝ 4

---


24. **Համընթաց ուղղությամբ երթեւեկող տրանսպորտային միջոցների միաժամանակյա վերադասավորման դեպքում ճանապարհը պետք է զիջի**

1. **Ձախից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը:**
2. Աջից ընթացող տրանսպորտային միջոցի վարորդը:

Պատ.՝ 1

---

25. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի առաջնահերթ երթեւեկության իրավունք:**



1. **Բեռնատար ավտոմոբիլի վարորդը**
2. Ավտոբուսի վարորդը

Պատ.՝ 1

---

26. **Եթե համապատասխան նշաններով կահավորված, երկայնական թեքությամբ ճանապարհահատվածներում հանդիպակաց երթեւեկությունը դժվարացած է, ապա ճանապարհը պետք է զիջել**

1. Վայրէջքի ուղղությամբ ընթացող տրանսպորտային միջոցին:
2. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցին:
3. **Վերելքի ուղղությամբ ընթացող տրանսպորտային միջոցին:**

Պատ.՝ 3

---

27. **Երթեւեկության առավելություն ունի**



1. Կապույտ ավտոմոբիլը, քանի որ կարմիրը փոխում է երթեւեկության ուղղությունը դեպի ձախ:
2. **Կարմիր ավտոմոբիլը, քանի որ միաժամանակյա վերադասավորման դեպքում գտնվում է աջ կողմում:**
3. Կապույտ ավտոմոբիլը, քանի որ միաժամանակյա վերադասավորման դեպքում գտնվում է ձախ կողմում:

Պատ.՝ 2

---


28. **Պարտավո՞ր են արդյոք տրանսպորտային միջոցների վարորդները բնակավայրերում ճանապարհը զիջել կահավորված եւ նշված կանգառի կետերի տարածքից երթեւեկությունը սկսող ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներին:**

1. **Այո**
2. Ոչ

Պատ.՝ 1

---

29. Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:



1. **Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը**
2. Բեռնատար ավտոմոբիլի վարորդը

Պատ.՝ 1

---

30. Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:




1. Ավտոբուսի վարորդը
2. **Ավտոմոբիլի վարորդը**

Պատ.՝ 2

---

31. Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:




1. **Ավտոմոբիլի վարորդը**
2. Տրամվայի վարորդը

Պատ.՝ 1

---

32. Նշե՛ք խաչմերուկի անցման հերթականությունը:



1. Ավտոբուսը, բեռնատար ավտոմոբիլը, լծասայլը
2. **Ավտոբուսը եւ լծասայլը, բեռնատար ավտոմոբիլը**

Պատ.՝ 2

---

33. **Հանդիպակաց երթեւեկության դեպքում կտրուկ վայրէջքի վրա անհրաժեշտ է ճանապարհը զիջել**

1. Ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցին:
2. **Վերեւ բարձրացող տրանսպորտային միջոցին:**
3. Ներքեւ իջնող տրանսպորտային միջոցին:

Պատ.՝ 2

---

34. **Բնակավայրերում միեւնույն ուղղությամբ երթեւեկության 3 եւ ավելի գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտի զբաղեցնել թույլատրվու՞մ է արդյոք թեթև մարդատար տրանսպորտային միջոցներին:**

1. Թույլատրվում է վազանց կատարելիս
2. Թույլատրվում է ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս
3. **Թույլատրվում է թվարկված երկու դեպքերում**

Պատ.՝ 3

---

35. **Բոլոր ճանապարհներին միեւնույն ուղղությամբ երթեւեկության 3 եւ ավելի գոտիների առկայության դեպքում ձախ եզրային գոտի զբաղեցնել թույլատրվու՞մ է արդյոք մոտոցիկլներին:**

1. Թույլատրվում է վազանց կատարելիս
2. Թույլատրվում է ձախ շրջադարձ կամ հետադարձ կատարելիս
3. **Թույլատրվում է թվարկված երկու դեպքերում**

Պատ.՝ 3

---

36. **Տվյալ իրադրությունում սպիտակ թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը**



1. **Ճանապարհը պետք է զիջի երթուղային ավտոբուսին, որը սկսում է երթեւեկությունը նշված կանգառի կետից:**
2. Ունի առաջնահերթ երթեւեկության իրավունք, քանի որ երթուղային ավտոբուսը վերադասավորվում է՝ երկրորդ գոտի անցնելով:

Պատ.՝ 1

---

37. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի առաջնահերթ երթեւեկության իրավունք:**



1. **Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը**
2. Երթուղային ավտոբուսի վարորդը

Պատ.՝ 1

---

38. **Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի առաջնահերթ երթեւեկության իրավունք տվյալ իրավիճակում:**



1. **Ավտոբուսի վարորդը**
2. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը
3. Թեթեւ մարդատար ավտոմոբիլի վարորդը իրավունք չունի անցնել աջ գոտի

Պատ.՝ 1

---

39. **Եթե մտադիր եք շարունակել երթեւեկությունն ուղիղ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. **Երկու տրանսպորտային միջոցներին**
2. Միայն ավտոբուսին
3. Միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլին
4. Ոչ մեկին

Պատ.՝ 1

---

40. **Եթե մտադիր եք շարունակել երթեւեկությունն ուղիղ, ու՞մ պետք է զիջել ճանապարհը:**



1. Միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլին
2. **Միայն ավտոբուսին եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլին**
3. Բոլոր տրանսպորտային միջոցներին
4. Միայն մոտոցիկլին

Պատ.՝ 2

---

41. **Տվյալ իրադրությունում պարտավո՞ր է մոտոցիկլի վարորդը զիջել ճանապարհը:**



1. Պարտավոր չէ
2. **Պարտավոր է**

Պատ.՝ 2

---

42. Տվյալ իրադրությունում ունե՞ք արդյոք նշված մանեւրի իրավունք:



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

43. Դուք շարունակում եք երթեւեկությունն ուղիղ: Ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:



1. Միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլին
2. Բեռնատար ավտոմոբիլին
3. **Երկու տրանսպորտային միջոցներին**
4. Ոչ մեկին

Պատ.՝ 3

44. Դուք շարունակում եք երթեւեկությունն ուղիղ: Պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը թեթեւ մարդատար ավտոմոբիլին:




1. Պարտավոր եք
2. **Պարտավոր չեք**

Պատ.՝ 2

---

45. Դուք սկսում եք երթեւեկել ճամփեզրից: Պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը թեթեւ մարդատար ավտոմոբիլին, որը կատարում է հետադարձ:



1. **Պարտավոր եք**
2. Պարտավոր չեք

Պատ.՝ 1

---

46. Դուք շարունակում եք երթեւեկությունն ուղիղ: Ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:



1. **Միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլին**
2. Ոչ մեկին
3. Միայն թեթեւ մարդատար ավտոմոբիլին եւ մոտոցիկլին
4. Բոլոր տրանսպորտային միջոցներին

Պատ.՝ 1

---

47. Եթե մտադիր եք կատարել ձախ շրջադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:



1. Մոտոցիկլին
2. Պարեկային ավտոմոբիլին
3. **Բոլոր տրանսպորտային միջոցներին**

Պատ.՝ 3

---

48. **Եթե մտադիր եք խաչմերուկում կատարել հետադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. Թեթեւ մարդատար ավտոմոբիլին
2. **Բոլոր տրանսպորտային միջոցներին**
3. Բեռնատար ավտոմոբիլին

Պատ.՝ 2

---

49. **Եթե մտադիր եք խաչմերուկում կատարել ձախ շրջադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. Բեռնատար ավտոմոբիլին
2. **Բոլոր տրանսպորտային միջոցներին**
3. Ոչ մեկին

Պատ.՝ 2

---

50. **Եթե մտադիր եք խաչմերուկում կատարել ձախ շրջադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. Ոչ մեկին
2. **Միայն ավտոբուսին**
3. Միայն միացված փարոսիկով բեռնատար ավտոմոբիլին
4. Բոլոր տրանսպորտային միջոցներին

Պատ.՝ 2

---

51. **Եթե մտադիր եք խաչմերուկում կատարել հետադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. **Բեռնատար ավտոմոբիլին**
2. Թեթեւ մարդատար ավտոմոբիլին
3. Բոլոր տրանսպորտային միջոցներին
4. Ոչ մեկին

Պատ.՝ 1

---

52. **Եթե մտադիր եք կատարել ձախ շրջադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:**



1. Ավտոբուսին
2. Ավտոբուսին եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլին
3. Թեթեւ մարդատար ավտոմոբիլին
4. **Ոչ մեկին**

Պատ.՝ 4

---

53. **Եթե մտադիր եք կատարել աջ շրջադարձ, պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը թեթեւ մարդատար ավտոմոբիլին:**




1. Պարտավոր եք
2. **Պարտավոր չեք**

Պատ.՝ 2

---

54. Եթե մտադիր եք կատարել աջ շրջադարձ, ո՞ր տրանսպորտային միջոցին պետք է զիջել ճանապարհը:



1. Ոչ մեկին
2. Թեթեւ մարդատար ավտոմոբիլին
3. Մոտոցիկլին եւ թեթեւ մարդատար ավտոմոբիլին

Պատ.՝ 1

---

55. Պարտավոր ենք արդյո՞ք այս իրավիճակում զիջել հանդիպակաց գոտուց մոտեցող ավտոմոբիլի վարորդին:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 1

---

56. Այս իրավիճակում պարտավոր եք



1. Զիջել ճանապարհը:
2. Անցնել առաջինը:

Պատ.՝ 1

---

57. Տվյալ իրավիճակում



1. Կարող ենք շրջանցել բեռնատարին աջ կողմից՝ կողնակով:
2. **Շարունակել երթևեկությունը միայն բեռնատարի անցումից հետո:**
3. Երկու գործողություններն էլ թույլատրելի են:

Պատ.՝ 2

---

58. Այս իրավիճակում



1. Պետք է զիջել ճանապարհը:
2. **Կարող եք առաջինն անցնել:**

Պատ.՝ 2

---

59. Տվյալ իրավիճակում ուղիղ երթևեկելու դեպքում թույլատրվում է



1. Շրջանցել բեռնատարն աջ կողմից:
2. Շարունակել երթևեկությունը միայն բեռնատարի անցումից հետո:
3. **Նշված երկու դեպքերն էլ թույլատրելի են:**

Պատ.՝ 3

---

60. Այս իրավիճակում




1. Պարտավոր ենք զիջել ճանապարհը:
2. **Ունենք առաջնահերթ երթևեկության իրավունք:**

Պատ.՝ 2

---

61. Ո՞ր հետագծով է թույլատրվում մոտենալ մայթեզրում սպասող հետիոտնին:



1. Միայն A:
2. **Միայն B:**
3. Երկու հետագծերով էլ թույլատրվում է:

Պատ.՝ 2

---

62. Դուրս գալով ճանապարհի՝ այս իրավիճակում պարտավոր ենք զիջել



1. Աջ կողմից մոտեցող վարորդներին:
2. Բոլոր վարորդներին:
3. **Վարորդներին և հետիոտներին:**

Պատ.՝ 3

---

63. Այս իրավիճակում ճանապարհը զիջել պարտավոր է



1. Թեթև մարդատարի վարորդը:
2. Մոտոցիկլի վարորդը:

Պատ.՝ 1

---

64. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:



1. Միայն A
2. Միայն B
3. Երկու հետագծերով էլ թույլատրվում է:

Պատ.՝ 1

---

65. Կապույտ ավտոմոբիլի վարորդը ո՞ր նկարում ներկայացված իրավիճակում ունի առաջնահերթ երթևեկության իրավունք մյուս վարորդի նկատմամբ:



1. Ձախ
2. Աջ
3. Երկու նկարներում էլ

Պատ.՝ 3

---

66. Հետադարձը նշված տեղում




1. Թույլատրվում է, եթե մոտեցող գնացք չկա:
2. **Թույլատրվում է:**
3. Արգելվում է:

Պատ.՝ 2

---

67. Ո՞ր հետագծով է թույլատրված աջ շրջադարձը:



1. **Միայն A**
2. Միայն B
3. Երկու հետագծերով էլ թույլատրված է:

Պատ.՝ 1

---

68. Նշված եղանակով հետադարձն այս խաչմերուկում



1. Թույլատրվում է:
2. **Չի թույլատրվում:**

Պատ.՝ 2

---

69. Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:



1. Բեռնատարի
2. **Թեթև մարդատարի**

Պատ.՝ 2


70. Ո՞ր հետագծով է թույլատրվում հետադարձը վարորդին:



1. Միայն A
2. **Միայն B**
3. Ցանկացած

Պատ.՝ 2

71. Այս գոտուց ո՞ր ուղղությամբ կարող է թեթև մարդատարի վարորդը շարունակել երթևեկությունը:



1. Միայն ուղիղ
2. Ուղիղ և աջ
3. Ցանկացած
4. **Ուղիղ, ձախ և հակառակ**

Պատ.՝ 4

72. Աջ շրջադարձ կատարելիս դեպի աջ հարող ճանապարհ՝ անհրաժեշտ է



1. Շարունակել երթևեկությունն այս գոտով և շրջադարձը կատարել միայն այդ գոտուց:
2. **Վերադասավորվել արգելակման գոտի և շրջադարձը կատարել միայն այդ գոտուց:**
3. Երկու տարբերակներն էլ ճիշտ են:

Պատ.՝ 2

---

73. Դեպի բակ ձախ շրջադարձ կատարելիս ո՞ւմ պետք է զիջել ճանապարհը:



1. Միայն հանդիպակաց ուղղությամբ երթևեկող ավտոմոբիլի վարորդին
2. **Վարորդին և հետիոտներին**
3. Ոչ ոքի

Պատ.՝ 2

---

74. Հետադարձն այս խաչմերուկում



1. **Թույլատրված է:**
2. Արգելված է:

Պատ.՝ 1

---

75. **Պարտավո՞ր է թեթև մարդատարի վարորդը զիջել ճանապարհն իր գոտի վերադասավորվող ավտոկռունկի վարորդին:**



1. Այո, եթե ավտոկռունկը նարնջագույն փարոսիկներով է կահավորված
2. Այո
3. **Ոչ**

Պատ.՝ 3

---

76. **Թույլատրվա՞ծ է հետադարձն այս վայրում:**




1. Այո
2. **Թույլատրված է, եթե տեսանելիությունը 100 մետր և ավելի է**
3. Ոչ

Պատ.՝ 2

---

77. **Պարտավո՞ր է արդյոք թեթև մարդատարի վարորդը վերադասավորվել աջ եզրային գոտի՝ վազանցն ավարտելուց հետո:**



1. **Ոչ, եթե վազանցը կատարում է բնակավայրում:**
2. Այո
3. Ոչ

Պատ.՝ 1

---

78. Ո՞ր հետագծով է թույլատրված ձախ շրջադարձը



1. Միայն A
2. **Միայն B**
3. Ցանկացած

Պատ.՝ 2

---


79. Այն դեպքերում, երբ տրանսպորտային միջոցների երթևեկության ուղիները հատվում են, իսկ անցման հերթականությունը կանոններով սահմանված չէ, ճանապարհը պետք է զիջի այն վարորդը

1. **Որին տրանսպորտային միջոցը մոտենում է աջից:**
2. Որին տրանսպորտային միջոցը մոտենում է ձախից:

Պատ.՝ 1

---

80. Ո՞ր վարորդը պետք է զիջի ճանապարհը:




1. **Սպիտակ ավտոմոբիլի վարորդը**
2. Դեղին ավտոմոբիլի վարորդը

Պատ.՝ 1

---

81. Հետադարձը նշված վայրում




1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է, եթե չի խոչընդոտում ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների վարորդներին:
3. **Արգելվում է:**

Պատ.՝ 3

---

82. Ո՞ր հետագծով է թույլատրված ձախ շրջադարձը:




1. Միայն A
2. **Միայն B**
3. Ցանկացած

Պատ.՝ 2

---

83. Թեթև մարդատարի վարորդը




1. **Պետք է զիջի ճանապարհը:**
2. Ունի առավելություն, քանի որ մոտեցել է աջ կողմից:

Պատ.՝ 1

---

84. Ո՞ր հետագծով է թույլատրված աջ շրջադարձը:



1. **Միայն A**
2. Միայն B
3. Ցանկացած

Պատ.՝ 1

---

85. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:




1. Միայն A
2. **A կամ C**
3. Բոլոր

Պատ.՝ 2

---

86. Պարտավո՞ր է վարորդը վերադասավորվել աջ գոտի և հետո միայն կատարել աջ շրջադարձն այս իրավիճակում:



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2

---

87. Գտնվելով կամրջի վրա՝ թույլատրվո՞ւմ է հետադարձը:




1. Թույլատրվում է, եթե տեսանելիությունը 100 մետր և ավելի է
2. Արգելվում է

Պատ.՝ 2

---

88. Մուտք գործել խաչմերուկ նշված գոտուց




1. Թույլատրվում է միայն հետադարձ կատարելիս:
2. Թույլատրվում է ցանկացած դեպքում:

Պատ.՝ 2

---

89. Թույլատրվա՞ծ է հետադարձն այս վայրում:




1. Այո
2. Թույլատրված է, եթե տեսանելիությունը 100 մետր և ավելի է
3. Ոչ

Պատ.՝ 2

---

90. Երկրորդ գոտիով ուղիղ ընթացող վարորդը պարտավո՞ր է զիջել աջից վերադասավորվող վարորդին:



1. **Պարտավոր չէ**
2. Պարտավոր է

Պատ.՝ 1

---

91. Հետադարձն այս վայրում




1. **Թույլատրվում է:**
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

---

92. Ձախ շրջադարձը թույլատրվում է




1. Միայն A հետագծով
2. Միայն B հետագծով
3. **Ցանկացած հետագծով**

Պատ.՝ 3

---

93. Կայանատեղիից միաժամանակ երթևեկությունը սկսելու դեպքում պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը առջևում գտնվող վարորդին:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 1

---

94. Այս իրավիճակում վարորդը ո՞ր հետագծով իրավունք ունի կատարել ձախ շրջադարձ:



1. Միայն A
2. Միայն B
3. Ցանկացած

Պատ.՝ 3

---

95. Խաչմերուկում թույլատրվու՞մ է արդյոք հետընթաց կատարումով հետադարձ կատարել:



1. Այո
2. Այո, եթե խոչընդոտ չի ստեղծի խաչմերուկով երթևեկողների համար
3. Ոչ

Պատ.՝ 3

---

96. **Թույլատրվո՞ւմ է վարորդին այս իրավիճակում աջ շրջադարձ կատարել:**



1. Այո
2. **Ոչ**

Պատ.՝ 2


97. **Այս իրավիճակում կանգառ կատարելիս ո՞ր ազդանշանի լուսային ցուցիչը պետք է միացնի վարորդը:**



1. Աջ
2. Աջ, վերադասավորումից հետո՝ ձախ
3. **Ձախ**

Պատ.՝ 3

98. **Նշեք այն հետագիծը (հետագծերը), որով թույլատրված է երթևեկությունը:**



1. Բոլոր
2. Միայն A
3. **Միայն A կամ C**

Պատ.՝ 3


99. **Տեսանելիության բացակայության պատճառով հետընթաց կատարելիս վարորդը պետք է**

1. Ձայնային ազդանշան տա:
2. Միացնի վթարային լուսային ազդանշանը:
3. **Դիմի այլ անձանց օգնությանը:**

Պատ.՝ 3

---

100. **Բակ մուտք գործելու համար հետընթաց կատարելն այս իրավիճակում**




1. Թույլատրվում է:
2. **Արգելվում է:**

Պատ.՝ 2

---

101. **Այս իրավիճակում հետընթաց վարմամբ հետադարձ կատարելը՝ օգտագործելով բակի մուտքը**




1. **Թույլատրվում է, եթե չի խոչընդոտի այլ երթևեկողներին**
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

---

102. Թույլատրվո՞ւմ է թեթև մարդատարի վարորդին սկսել երթևեկությունը:



1. Այո
2. Այո, եթե չի խոչընդոտի բեռնատարի վարորդին
3. Ոչ

Պատ.՝ 2

---


103. Ո՞ր տարբերակում է թույլատրված հետընթացը:

1. Խաչմերուկներում
2. Աջ եզրային չհանդիսացող գոտիներում
3. Հետիոտնային անցումներում

Պատ.՝ 2

---

104. Տվյալ իրավիճակում թույլատրվու՞մ է վարորդին երթևեկել տրամվայի գծերով:



1. Այո
2. Թույլատրվում է միայն հետադարձ կամ ձախ շրջադարձ կատարելու դեպքում
3. Ոչ

Պատ.՝ 3

---

105. Այս իրավիճակում ձախ շրջադարձ կատարելիս պարտավո՞ր է արդյոք վարորդը լուսային ցուցիչով ազդանշան տալ:




1. **Այո**
2. Այո, երբ առկա է հանդիպակաց երթևեկող
3. Պարտավոր չէ

Պատ.՝ 1

---

106. Ձախ շրջադարձ թույլատրվում է



1. Միայն A հետագծով:
2. **Միայն B հետագծով:**
3. Երկու հետագծերով:

Պատ.՝ 2

---

107. Հետընթաց վարմամբ թեթև մարդատարի վարորդին թույլատրվո՞ւմ է մոտենալ կամրջի վրա գտնվող ուղևորին:



1. Այո
2. Այո, եթե չի ստեղծի խոչընդոտ այլ մասնակիցների համար
3. **Ոչ**

Պատ.՝ 3

---

108. Թույլատրվու՞մ է հետադարձ կատարել այս իրավիճակում:



1. **Թույլատրվում է միայն ճանապարհի 100 մետրից ավելի տեսանելիության դեպքում**
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

109. Ի՞նչ կանոն է խախտում վարորդը՝ մուտք գործելով բակ:



1. Աջ շրջադարձ է կատարում միայն ուղիղ նշանի ազդման գոտում
2. **Լուսային ցուցիչով ազդանշան չի տալիս**
3. Երկու խախտումները՝ միաժամանակ

Պատ.՝ 2

---

110. Բեռնատարի վարորդին ճանապարհը զիջել




1. Պարտավոր ենք:
2. Պարտավոր ենք, եթե նա այդ մասին ձեռքով ազդանշան է տվել:
3. **Պարտավոր չենք:**

Պատ.՝ 3

---

111. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:




1. **Միայն A**
2. Միայն B
3. Ցանկացած

Պատ.՝ 1

---

112. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:



1. **Ցանկացած**
2. Միայն B
3. Միայն A

Պատ.՝ 1

---


113. Ճանապարհը պետք է զիջի



1. Թեթև մարդատարի վարորդը:
2. **Բեռնատարի վարորդը:**

Պատ.՝ 2

114. **Թույլատրվո՞ւմ է սխալմամբ խաչմերուկ մուտք գործելուց հետո հետընթաց վարմամբ շտկել և շարունակել երթևեկությունն անհրաժեշտ ուղղությամբ:**




1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 2

---

115. **Այս գոտուց երթևեկությունը շարունակել թույլատրվում է**




1. Միայն ձախ ուղղությամբ:
2. Ձախ և հակառակ ուղղություններով:
3. Աջ, ձախ և հակառակ ուղղություններով:

Պատ.՝ 2

---

116. **Թույլատրվո՞ւմ է նշված իրադրությունում հետընթաց կատարել՝ աջ շրջադարձով բակ մտնելու համար:**



1. Այո, եթե չենք խոչընդոտի ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցների երթևեկությունը
2. Ոչ

Պատ.՝ 2

---

117. Այս իրավիճակում, վերադասավորվելով հարևան գոտի,




1. Պարտավոր եք զիջել նշված գոտով ընթացող վարորդներին:
2. Ունեք երթևեկության առավելություն:

Պատ.՝ 1

---

118. Ո՞ր հետագծով է թույլատրված հետադարձը:



1. Միայն A
2. Միայն B
3. Ցանկացած

Պատ.՝ 3

---

119. Ո՞ր հետագծով է թույլատրված ձախ շրջադարձը




1. Միայն A
2. Միայն C
3. Ցանկացած

Պատ.՝ 3

---

120. Այս իրավիճակում թույլատրվու՞մ է հետընթացով մոտենալ ուղևորին:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 1

121. Ինչպե՞ս պետք է վարվեք խաչմերուկից դուրս ձախ շրջադարձի և հետադարձի ժամանակ:

1. Պետք է ճանապարհը զիջել հանդիպակաց տրանսպորտային միջոցներին
2. Պետք է ճանապարհը զիջել հանդիպակաց տրանսպորտային միջոցներին և համընթաց երթևեկող տրամվայներին

Պատ.՝ 2

122. Այս իրավիճակում թույլատրվու՞մ է հետընթաց:



1. Արգելվում է
2. Թույլատրվում է՝ մինչև հետիոտնային անցումը

Պատ.՝ 1

123. Երթևեկությունը սկսելիս պարտավո՞ր եք արդյոք զիջել ճանապարհը հետադարձ կատարող վարորդին:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 1

124. Այս իրավիճակում հետընթացով մոտենալ ուղևորին



1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է, եթե չի խոչընդոտում այլ վարորդների երթևեկությանը:
3. **Արգելվում է:**

Պատ.՝ 3

---

125. Ո՞ր վարորդն է խախտում երթևեկության կանոնները՝ դուրս գալով շրջանաձև երթևեկությամբ խաչմերուկից:




1. **Թեթև մարդատարի վարորդը**
2. Երկու վարորդներն էլ խախտում են
3. Ոչ ոք

Պատ.՝ 1

---

126. Հետադարձն այս խաչմերուկում




1. **Թույլատրվում է:**
2. Արգելվում է:

Պատ.՝ 1

---

127. Ո՞ր ուղղությամբ է թույլատրված երթևեկությունը:



1. **Միայն ձախ**
2. Ուղիղ և ձախ
3. Ձախ և հետադարձ

Պատ.՝ 1

---

128. Պարտավո՞ր եք արդյոք միացնել աջ շրջադարձի ցուցիչն այս խաչմերուկում:



1. **Այո**
2. Ոչ
3. Այո, բացառությամբ հետադարձ կատարելիս:

Պատ.՝ 1

---

129. Մերձակա տարածք մուտք գործելիս վարորդը պետք է ճանապարհը զիջի

1. Միայն հետիոտներին:
2. Միայն հեծանվորդներին:
3. **Հեծանվորդներին և չստեղծի խոչընդոտ հետիոտների համար:**

Պատ.՝ 3

---

130. Մերձակա տարածքից դուրս գալիս վարորդը պետք է ճանապարհը զիջի

1. միայն հետիոտներին:
2. դրանով երթևեկող տրանսպորտային միջոցներին:
3. **երթևեկող տրանսպորտային միջոցներին և չստեղծի խոչընդոտ հետիոտների համար:**

Պատ.՝ 3

---

131. Հետադարձ կատարել նշանից հետո թույլատրվում է



1. Միայն երկու կողմից 100 մետր տեսանելիության դեպքում:
2. Խոչընդոտ չստեղծելու դեպքում:
3. **Ոչ մի դեպքում:**

Պատ.՝ 3

---

132. Ազդանշան տալը երթևեկության մյուս մասնակիցների նկատմամբ առավելություն

1. Տալիս է:
2. Տալիս է միայն վերադասավորվելիս:
3. **Չի տալիս:**

Պատ.՝ 3

---

133. Նշված հետագծով աջ շրջադարձը



1. **Թույլատրված է:**
2. Արգելված է:

Պատ.՝ 1

---

134. **Բեռնատարից առաջ անցնելուց հետո ո՞ր գոտով է թույլատրվում շարունակել երթևեկությունը:**




1. **Միայն աջ**
2. Երկու համընթաց գոտիներով էլ թույլատրվում է

Պատ.՝ 1

---

135. **Դեպի բակ շրջադարձ կատարելիս պետք է**



1. Զիջել հեծանվորդին:
2. Ստեղծել խոչընդոտ հետիոտների համար:
3. **Երկու պատասխաններն էլ ճիշտ են:**

Պատ.՝ 3

---

136. **Հետադարձը նշված վայրում**



1. Թույլատրվում է:
2. Թույլատրվում է, եթե առկա չեն ընդհանուր օգտագործման տրանսպորտային միջոցներ:
3. **Արգելվում է:**

Պատ.՝ 3

---

137. Եթե երկու կողմից 100 մետր տեսանելիությունն ապահովված է, թույլատրվու՞մ է նշված հետագծով հետադարձ կատարել:



1. Ոչ
2. Այո

Պատ.՝ 1


138. Առաջնահերթ երթևեկության իրավունք ունի



1. Թեթև մարդատարի վարորդը:
2. Բեռնատարի վարորդը:

Պատ.՝ 2

139. Միաժամանակ վերադասավորվելիս ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդն ունի առաջնահերթ երթևեկության իրավունք:



1. Բեռնատարի վարորդը
2. Թեթև մարդատարի վարորդը

Պատ.՝ 2

140. Թույլատրվո՞ւմ է հետընթացով մոտենալ ուղևորին:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 2

---

141. Աջ շրջադարձ կատարելով բակ մուտք գործելու դեպքում՝ պարտավոր ենք զիջել



1. Միայն հետիոտներին:
2. Միայն հեծանվորդին:
3. Ոչ մեկին:
4. Հեծանվորդին և հետիոտներին:

Պատ.՝ 4

---

142. Այս վերելքի ուղղությամբ շարժվելիս հետադարձը



1. Թույլատրվում է, եթե հնարավոր լինի այն կատարել մեկ գործողությամբ:
2. Թույլատրվում է, եթե ապահովված է 100 մետր տեսանելիությունը՝ երկու կողմից:
3. Չի թույլատրվում:

Պատ.՝ 2

---

143. Ո՞ր տրանսպորտային միջոցի վարորդը պետք է զիջի ճանապարհը:



1. Ավտոբուսի վարորդը
2. Թեթև մարդատարի վարորդը

Պատ.՝ 1

---

144. Թույլատրվում է հետադարձն այս վայրում:



1. Թույլատրվում է՝ երկու կողմից 100մ տեսանելիության պայմաններում
2. Արգելվում է

Պատ.՝ 1

---

145. Թույլատրվո՞ւմ է անցնել կամուրջը, եթե դա չի խոչընդոտում մոտոցիկլի վարորդին:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 1

---

146. Թույլատրվու՞մ է արդյոք բեռնատարից առաջ անցնելուց հետո շարունակել երթևեկությունն այս գոտիով:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 2

---

147. Թույլատրվո՞ւմ է այս իրավիճակում շարունակել երթևեկությունը զբաղեցրած գոտիով:



1. Այո
2. Ոչ

Պատ.՝ 1